# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով շրջանակային
համաձայանգիր կնքած բոլոր Մասնակիցներին

Հարգելի Մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր կազմակերպության միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված վառելիք /ռեգուլյար տեսակի բենզին/:

Սույն հրավերի(ծանուցման) ծածկագիրն է՝ ՏԲՎՏԿ- ՇՀԱՊՁԲ-11/1

Ապրանքի մատակարարման պայմաններն են համաձայն առաջակված պայմանագրի նախագծի:

Ընթացակարգի հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով կառաջարկի լավագույն գինը:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել թղթային տարբերակով՝ մինչև 2015 թվականի փետրվարի 9-ը, ժամը 14.00-ն, «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ հասցեով (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1, 4-րդ մասնաշենք): Մասնակցի կողմից ներկայացվող գնման հայտը պետք է ներառի Մասնակցի կողմից կազմված դիմումը և Գնային առաջարկը /բնօրինակները/:

Ընթացակարգին վերաբերող Ձեր հարցերը կարող եք ուղղել Պատվիրատուի info@gov.am էլեկտրոնային փոստին:

Գնման հայտերը կբացվեն սույն թվականի փետրվարի 9-ին, ժամը 14.00-ին՝ Պատվիրատուի գտնվելու վայրում՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1, 4-րդ մասնաշենք, 1-ին հարկ, 2-րդ սենյակ հասցեում:

Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն բացվի, իսկ սույն հրավերով ներկայացված պահանջներին հակասող կամ օրենքի խախտմամբ ներկայացված հայտերը չեն քննարկվի:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ հավելվածներով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրեն՝ Տ. Աբրահամյան